ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 դեկտեմբերի 2017թվականի N 1047*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 175-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի 176-Ն որոշումն՝*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝*

*1.Ծախսային մասում՝*

*1) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «13212.9» թիվը փոխարինել «13565.9» թվով, «Կոմունալ ծառայություններ» /4213/ հոդվածում «75.0» թիվը փոխարինել «42.0» թվով, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» /4239/ հոդվածում «240.0» թիվը փոխարինել «120.0» թվով, «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «400.0» թիվը փոխարինել «200.0» թվով:*

*2) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի Մանկապատանեկան մարզադպրոցի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «14251.2» թիվը փոխարինել «14444.2» թվով, «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «550.0» թիվը փոխարինել «400.0» թվով, «Կոմունալ ծառայություններ» /4213/ հոդվածում «85.0» թիվը փոխարինել «42.0» թվով:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 դեկտեմբերի 2017թվականի N 1048*

## *ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՎԵԼ ՄԱՍԻ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սամվել Թովմասյանի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Արշիլ Գորկու փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 16 տան բնակիչ Սամվել Թովմասյանի կողմից Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 8-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N13122017-07-0044, գաղտնաբառ՝ LXMPCIWCSJBZ/ բնակարանին կից ավել մասը, բաց պատշգամբը, բնակարանի ինքնակամ բացած պատուհանը և կատարել միջնորմների ձևափոխություն:*
*2.Սույն որոշման ընդունման օրվանից կից ավել մասի և բաց պատշգամբի օրինականացման համար սահմանված 8600 /ութ հազար վեց հարյուր/ դրամ և պատուհանների օրինականացման համար սահմանված 3400 /երեք հազար չորս հարյուր/ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*
*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2017թվականի N 1049

## ՀՐԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրանուշ Ղազարյանի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 26 շենքի թիվ 21 բնակարանի բնակչուհի Հրանուշ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1554515, տրված՝ 2003 թվականի սեպտեմբերի 26-ին/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 20 շենքի առաջին հարկում գտնվող ոչ բնակելի տարածքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 20/2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1050*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 90.0քմ մակերեսով 0035-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 104/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1051*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 20.0քմ մակերեսով 0454-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 43/45:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1052*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Մարշալ Բաղրամյան թաղամասում գտնվող 100.0քմ մակերեսով 0510-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս 5-րդ փողոց 26/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1053*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 345.0քմ մակերեսով 0516-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 27/2:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1054*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 34.0քմ մակերեսով 0443-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 26/8:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1055*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Վանատուր թաղամասում գտնվող 500.0քմ մակերեսով 0310-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց 1/8:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2017թվականի N 1056

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 56.0քմ մակերեսով 0109-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 3/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1057*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26 կետի 2-րդ ենթակետի.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասի 104/1 հասցեում գտնվող 90.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1058*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26 կետի 2-րդ ենթակետի.*

*Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Վանատուր թաղամասի Հայ Ֆիդայիների փողոց 1/8 հասցեում գտնվող 500.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1059*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26 կետի 2-րդ ենթակետի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 3/2 հասցեում գտնվող 56.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 դեկտեմբերի 2017թվականի N 1060*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագծերը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 31 մասնագիտական եզրակացությունը.*

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 43 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Հայկ Մինասյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 47/35 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 30.0քմ ընդհանուր մակերեսով հողամասում 30.0քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 դեկտեմբերի 2017թվականի N 1061*

### *ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերի՝*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Վավերացնել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2018-2020 թվականների եռամյա ռազմավարական և 2018 թվականի տարեկան ծրագրերը՝ համաձայն N 1, 2 հավելվածների:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված 1
Հրազդան համայնքի ղեկավարի
2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 1061 որոշման

# Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի ռազմավարական եռամյա ծրագիր

**Ծրագրի առաջին տարի** 2018
**Ծրագրի վերջին տարի** 2020

## Ներածություն

Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատմանը և դրանց բարելավման միջոցով կազմակերպության նպատակների արդյունավետ իրականացմանը:

Ներքին աուդիտի բաժինը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է հանրային հատվածում Ներքին աուդիտի գործունեությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով («Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներ, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոններ, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման ցուցումներ):

## Ներքին աուդիտի ստորաբաժանման առաքելությունը և խնդիրները

Ներքին աուդիտն ընդգրկում է համայնքապետարանի գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները:Ներքին աուդիտի գործունեության նպատակներից է.

1.Համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացնել, որ համայնքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունները և համայնքապետարանի բաժինները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները:

2.Օժանդակել վերոնշյալ կազմակերպությունների և բաժինների պետերին՝ հասնել իրենց առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքապետարանի համակարգերը և ծառայությունները:

3.Ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

4.Նվազեցնել վատնումների և այլ չարաշահումների դեպքերի տեղի ունենալու հավանականությունը:

Ներքին աուդիտի բաժնի գործառույթներից են համայնքապետարանի կառավարչական գործընթացների գնահատումը և բարելավումը, համայնքապետարանում իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացի գնահատումը, ներքին հսկողության համակարգի արդյունավետության և օգտավետության գնահատումը:

**Ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը**

Համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է ներքին աուդիտի գործունեության և զարգացման երեք տարվա պլանավորման փաստաթուղթ, որում նկարագրվում են աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները: Ռազմավարական ծրագիրը մշակվում է ներքին աուդիտի բաժնի պետի կողմից՝ հիմք ընդունելով համայնքապետարանի աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները (ռիսկերի գնահատումները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում համայնքապետարանում իրականացված ներքին աուդիտների եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները):

**Ներքին աուդիտի բաժնի կազմակերպումը և հետագա զարգացումը**

Համայնքապետարանի ներքին աուդիտի բաժինը գործում է համայնքի ղեկավարի ենթակայությամբ: Ներքին աուդիտի բաժինը կազմված է երկու տեսակ հիերարխիկ պաշտոններից՝ ներքին աուդիտի բաժնի պետ և առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավար: Համայնքապետարանի ներքին աուդիտի բաժինն աշխատանքների կազմակերպումն իրականացնում է ներքին աուդիտի կանոնակարգի դրույթներին համապատասխան: Ներքին աուդիտի բաժնի հետագա զարգացման համար ներքին աուդիտի բաժինն իրականացնում է վերահսկման և ընթացիկ դիտարկման գործընթացներ, ապահովում է աշխատակիցների մասնագիտական կարողունակության օպտիմալ մակարդակը:

| Միավոր | Տարի | Ժամկետ (օր) | Աուդիտի տեսակ | Ռիսկի խումբ |
|---|---|---|---|---|
| Քաղաքապետարանի աշխատակազմ | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Ֆինանսական բաժին | 2019 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Հարկային բաժին | 2020 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Տարածքային զարգացման հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժին | 2020 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Տրանսպորտի,առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժին | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Բնակելի ֆոնդի շահագործման կոմունալ բաժին | 2020 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Կրթության,մշակույթի և սպորտի բաժին | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ | 2019 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| <<Մաքուր Հրազդան>> ՀՈԱԿ | 2018 | 20 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| <<Հուղարկավորությունների կազմակերպման,գերեզմանատների պահպանման և շահագործման հիմնարկ>> | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| <<Վարչական շենքի սպասարկման հիմնարկ>> | 2020 | 10 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2019 | 10 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Միջին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2020 | 13 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2020 | 13 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 11 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2020 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2020 | 18 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2020 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Մանկապատանեկան մարզադպրոց | 2020 | 13 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Երիտասարդական մարզամշակութային կենտրոն | 2019 | 13 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն | 2019 | 13 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց ՀՈԱԿ | 2020 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց ՀՈԱԿ | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Երվանդ Քոչարի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Երվանդ Քոչարի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ | 2020 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոց | 2020 | 14 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Մշակույթի կենտրոն | 2018 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Մշակույթի կենտրոն | 2020 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Դրամատիկական թատրոն | 2020 | 12 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին | 2020 | 10 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Վերապատրաստվողներ | 2018 | 8 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Վերապատրաստվողներ | 2019 | 8 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Վերապատրաստվողներ | 2020 | 8 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| <<ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ>> ՀՈԱԿ | 2020 | 13 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկ | 2019 | 15 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Գնումների գործընթաց | 2018 | 20 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Գնումների գործընթաց | 2019 | 20 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Գնումների գործընթաց | 2020 | 20 | Համապատասխանության աուդիտ | Միջին |

**Ներքին աուդիտի բաժնի պետ՝** [signature] **Վ.Գյուրջյան**

Հավելված 2
Հրազդան համայնքի ղեկավարի
2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 1061 որոշման

# Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի տարեկան ծրագիր

**Տարի 2018**

**Ներածություն**

Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատմանը և դրանց բարելավման միջոցով կազմակերպության նպատակների արդյունավետ իրականացմանը:

**Ներքին աուդիտի բաժնի դերը և նշանակությունը**

Ներքին աուդիտի բաժինը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է հանրային հատվածում Ներքին աուդիտի գործունեությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով («Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներ, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոններ, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման ցուցումներ):Ներքին աուդիտն ընդգրկում է համայնքապետարանի գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները: Ներքին աուդիտի գործունեության նպատակներից է.

1.Համայնքի ղեռկավարին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացնել, որ համայնքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունները և համայնքապետարանի աշխատակազմի բաժինները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները:

2.Օժանդակել վերոնշյալ կազմակերպությունների և բաժինների պետերին՝ հասնել իրենց առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքապետարանի համակարգերը և ծառայությունները:

3.Ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

4.Նվազեցնել վատնումների և այլ չարաշահումների դեպքերի տեղի ունենալու հավանականությունը:

Ներքին աուդիտի բաժնի գործառույթներից են համայնքապետարանի կառավարչական գործընթացների գնահատումը և բարելավումը, համայնքապետարանում իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացի գնահատումը, ներքին հսկողության համակարգի արդյունավետության և օգտավետության գնահատումը:

**Տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը**

Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտի բաժնի պետը մշակում և համայնքի ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացնում առաջիկա տարում համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ տարեկան ծրագիր): Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտի բաժնի պետի կողմից և վավերացվում համայնքի ղեկավարի կողմից:

Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի բաժնի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել հաջորդ տարվա ընթացքում:Տարեկան ծրագիրը սահմանում է տվյալ տարվա ընթացքում քաղաքապետարանում իրականացվող առաջադրանքների իրականացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

**Ներքին աուդիտի բաժնի հետ փոխկապակցված գործունեության տեսակները**

Ներքին աուդիտի բաժնի հետ փոխկապակցված գործունեության տեսակներ.

ա) շարունակական մասնագիտական վերապատրաստում

բ) ներքին աուդիտի կոմիտեի նիստերին մասնակցություն

գ) ներքին աուդիտի մասին սեմինարների վարում և դրանց մասնակցություն:

**Ներքին աուդիտի բաժնի աշխատանքների կազմակերպումը**

Առաջադրանքի պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և նյութերը հավաքագրվում են ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջ տարվա ընթացքում մինչև առաջադրանքի մեկնարկը: Ներքին աուդիտի բաժնի կողմից ստացված տեղեկատվությունն ընդգրկում է միավորի կողմից իրականացվող գործառույթների գծով վերլուծությունները: Վերլուծությունների համար օգտագործվում է նաև այն տեղեկատվությունը, որը ձեռք է բերվել կամ կազմվել է համայնքապետարանում նախորդ տարիներին իրականացված աուդիտի առաջադրանքներից:

Աուդիտի առաջադրանքը մեկնարկում է համայնքի ղեկավարի կարգադրությամբ (աուդիտորական առաջադրանքի հանձնարարական), որտեղ նշվում են աուդիտի իրականացման նպատակները, շրջանակները, հիմքերը, աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի անդամները, հրավիրված մասնագետները և այլ մասնակիցները (առկայության դեպքում), աուդիտի իրականացման համար սահմանված ժամկետները:

Ներքին աուդիտի բաժինը յուրաքանչյուր առաջադրանքի մեկնարկից 3 աշխատանքային օր առաջ զգուշացնում է աուդիտի ենթարկվող միավորին՝ վերջինիս տրամադրելով առաջադրանքի մեկնարկի վերաբերյալ կարգադրությունը (հանձնարարականը):

**Հաշվետվությունները**

Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են հաշվետվություններում: Հաշվետվությունները պետք է լինեն արդյունավետ՝ համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և հավելյալ արժեք ստեղծելու նպատակով: Հաշվետվությունները կարող են ներկայացվել ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջնական տարբերակով: Այն դեպքում, երբ վերջնական հաշվետվության մի մասն առանձնացվում է, ներքին աուդիտի բաժինը ներկայացնում է ներքին աուդիտի միջանկյալ հաշվետվություն, որտեղ նշվում է դրա ներկայացման նպատակը: Ներքին աուդիտի բաժինը համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնում է գործունեության տարեկան հաշվետվություն, որն ամփոփում է տարվա ընթացքում բաժնի կատարած գործունեությունը:

Տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացվում են Լիազոր մարմնին:

| Միավոր | Աուդիտի տեսակ | Պլանավոր ված օրերի քանակ | Սկզբի ամսաթիվ | Ավարտի ամսաթիվ | Գործընթաց | Կցված աշխատակից | Պաշտոն | Ընդամենը մարդ/օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մշակույթի կենտրոն | Համապատասխանություն աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |
| | | | | | Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց | | | |
| Երվանդ Քոչարի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ | Համապատասխանություն աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |
| | | | | | Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց | | | |
| | | | | | Ուսումնական պրոցեսի կազմակերպման գործընթաց | | | |
| Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց ՀՈԱԿ | Համապատասխանություն աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |
| | | | | | Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց | | | |
| | | | | | Ուսումնական պրոցեսի կազմակերպման գործընթաց | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | Համապատասխանության աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց<br>Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց<br>Սննդի կազմակերպման գործընթաց<br>Սաների ընդունման և ազատման փաստաթղթավորման գործընթաց<br>Ամենամսյա ծնողական միջոցների հավաքագրման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |
| Թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | Համապատասխանության աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց<br>Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց<br>Սննդի կազմակերպման գործընթաց<br>Սաների ընդունման և ազատման փաստաթղթավորման գործընթաց<br>Ամենամսյա ծնողական միջոցների հավաքագրման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | Համապատասխանության աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |
| | | | | | Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց | | | |
| | | | | | Սննդի կազմակերպման գործընթաց | | | |
| | | | | | Սաների ընդունման և ազատման փաստաթղթավորման գործընթաց | | | |
| | | | | | Ամենամսյա ծնողական միջոցների հավաքագրման գործընթաց | | | |
| Թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | Համապատասխանության աուդիտ | 15 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 15 |
| | | | | | Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց | | | |
| | | | | | Սննդի կազմակերպման գործընթաց | | | |
| | | | | | Սաների ընդունման և ազատման փաստաթղթավորման գործընթաց | | | |
| | | | | | Ամենամսյա ծնողական միջոցների հավաքագրման գործընթաց | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ | Համակարգի գնահատման աուդիտ | 20 | 08/01/2018 | 28/12/2018 | Հաշվապահական հաշվառման վարման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 20 |
| | | | | | Կադրերի հետ տարվող աշխատանքների վարման գործընթաց | | | |
| Գնումների գործընթաց | Համապատասխանության աուդիտ | 20 | 08/01/2018 | 28/12/2018 | Պայմանագրերի կնքման գործընթաց | Գյուրջյան Վլադիմիր Բաղդասարյան Արփիկ | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 20 |
| | | | | | Պայմանագրերի կատարման գործընթաց | | | |

**Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Գյուրջյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *ՈՐՈՇՈՒՄ*

*26 դեկտեմբերի 2017թվականի N 1062*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 900.0քմ մակերեսով 0517-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 2/2:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 դեկտեմբերի 2017թվականի N 1063*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 22.9943 հա մակերեսով 0767-0003 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Երևան - Սևան մայրուղի 51:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 դեկտեմբերի 2017թվականի N 1064*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26 կետի 2-րդ ենթակետի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 2/2 հասցեում գտնվող 900.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 դեկտեմբերի 2017թվականի N 1065*

## *ՀԵՆՐԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Հենրիկ Լազիկի Մարկոսյանի /ծնված 1966 թվականի հունիսի 16-ին, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս,տուն 236/ 2017 թվականի դեկտեմբերի 13-ի դիմումը, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2011 թվականի փետրվար 10-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ ժառանգական գործ՝ 392, գրանցված սեղանամատյանում՝ 392, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1993 թվականի մարտի 16-ի թիվ 53 որոշումը և համապատասխան որակավորում ունեցող «ԴԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հենրիկ Մարկոսյանի կողմից մինչև 20% (0161-0009) ծածկագրում 0.00101 հա ավել օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:*

*2.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 236 տան բնակիչ Հենրիկ Մարկոսյանին պատկանող Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող 2510.1քմ հողամասում ինքնակամ կառուցած 108.3 քմ մակերեսով անասնաշենքը:*

*3.Հողամասի սահմանները որոշվում են «ԴԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ*

*պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*4.Հենրիկ Մարկոսյանին պատկանող անհատական բնակելի տան՝ դրա պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս, Գործարանային փողոց 28/1:*

*5.Անհատական բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:*

*6.Անհատական բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:*

*7.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 դեկտեմբերի 2017թվականի N 1066*

*ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 54 /հիսունչորս/ անապահով բնակիչների դիմումները՝*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Սոցիալական հատուկ արտոնություններ այլ դասերին չպատկանող» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 1745000 /մեկ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար/ դրամ հատկացնել Հրազդան քաղաքի թվով 54 /հիսունչորս/ անապահով բնակիչների:*
*2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 դեկտեմբերի 2017թվականի N 1067*

*«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումները, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով «Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 27-ի հայտը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ «Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N28062017-07-0043, գաղտնաբառ՝ XXVDFZ95BG6F) գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքերից 3.0հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ջերմատնային համալիր կառուցելու նպատակով:*

*2.«Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող 07-001-0500-0085 կադաստրային ծածկագրով 3.0հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կաքավաձոր տանող ավտոճանապարհ 5/7:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ